01/10.1/5362-10
2010-05-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Գագիկ Մելիքյանի, Սուքիաս Ավետիսյանի, Լյովա Խաչատրյանի և Տաճատ Վարդապետյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

Նախագծերի փաթեթով նախատեսվում է «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներից բխող Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի N 207-Ն և 208-Ն որոշումներով սահմանված դրամական օգնության չափերի բարձրացում՝ դրանք 2011 թվականի հունվարի 1-ից հավասարեցնելով նվազագույն աշխատավարձի կեսին։

AJV-17-51 2010-05-06

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումների փաթեթը (կենսաթոշակային ապահովություն, աշխատանք, նպաստներ), որով անդրադարձ է կատարվել նաև նվազագույն աշխատավարձի ինստիտուտին, առաջարկում ենք ներկայացված նախագծերի փաթեթը քննարկել սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումների համատեքստում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արտեմ Ասատրյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-872-14.04.2010-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասինե Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՕ-267 օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Ամենամսյա դրամական օգնությունը չի կարող պակաս լինել նվազագույն ամսական աշխատավարձի կեսից։ե։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից։

Նախագիծ
Պ-872[1]-14.04.2010-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասինե Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Ամենամսյա դրամական օգնությունը չի կարող պակաս լինել նվազագույն ամսական աշխատավարձի կեսից։ե։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից։

Հիմնավորում

«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասինե եւ «Զինծառայողների եվ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասինե ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության

Նախագծով առաջարկվում է վետերանների եւ հաշմանդամ դարձած զինծառայողների եւ ծառայության ընթացքում զոհված/մահացած/ զինծառայողների ընտանիքների համար նախատեսված ամենամսյա դրամական օգնության հաշվարկները կատարել՝ հիմք ընդունելով տվյալ տարվա արդյունքով հանրապետությունում գրանցված պաշտոնական գնաճի մեծությունը: Քանի որ ներկայումս նվազագույն սպառողական զամբյուղի չափը օրենքով սահմանված չէ, առաջարկում ենք ամենամսյա դրամական օգնությունը դիտարկել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հետ հարաբերակցության մեջ: